

## ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

### ԻՆՔՆԱԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԵՎ ԱՈՒՆՁՆԱՅԱԿՈՒԿ ԵՍ-Ի ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

17.05.2014

*Քաղաքական դասընթացների երևանյան դպրոց*

Թեման, որ այսօր կփորձեն ձեզ ներկայացնել, բավականին բարդ է, որովհետև քննարկվելիք հարցերը տարբեր ոլորտներում, տարբեր տեսություններում ունեն տարբեր ընկալումներ, տարբեր մեկնաբանություններ և կախված են նրանից, թե առարկան, որն ուսումնասիրում ենք, ինչի՞ համար ենք ուսումնասիրում, և ի՞նչ նպատակ ունենք:

Կփորձեն նյութն այնպես ներկայացնել, որ ձեռք բերեք նոր կարողություն, կատարելագործելով ինքնուրույն մտածողության կարողությունը: Տվյալ դեպքում հիմնականը, որի մասին խոսելու ենք, ինքնագիտակցություն հասկացություն է, իսկ ինքնաճանաչումը, ինքնանույնականացումը և ինքնորոշումը, այս երեք հասկացություններն ինքնագիտակցության կարևորագույն տարրերն են: Ինքնագիտակցությունը ներառում է այս երեք հասկացությունները՝ ինքնաճանաչում, ինքնանույնականացում և ինքնորոշում: Ինքնանույնականացումը տարողունակ հասկացություն է, շատ հաճախ հասարակագիտության մեջ, քաղաքականության մեջ, քաղաքական դեբատներում օգտագործվում է հենց այդ ինքնանույնականացում տերմինը, բայց պետք է արձանագրենք, որ այն ինքնագիտակցության կարևորագույն տարր է:

#### **Ինչ է ինքնագիտակցությունը**

Ինքնագիտակցությունը միասնական և առանձնահատուկ սեփական ԵՍ-ի, որպես առանձին մի էության, գիտակցումն է, որն ունի մտքեր, զգայություն, ցանկություններ, գործելու կարողություն, և ներառում է այդ երեք հասկացությունները՝ ինքնաճանաչում, ինքնանույնականացում և ինքնորոշում: Այսինքն՝ դա սեփական ԵՍ-ի գիտակցումն է: Եթե ընդունում ենք դա, ուրեմն հասկանում ենք, որ մեզանից շատերն այդ, սեփական ԵՍ-ը բացահայտելու վարժությամբ չեն զբաղվել: Ու եթե հիմա ամենքս փորձենք առանձին-առանձին գնահատել սեփական ինքնության գիտակցումը, ապա կստացվի շատ խառը պատկեր: Այսինքն՝ պետք է մտածեք հետևյալի մասին՝ ունե՞ք արդյոք ձեր սեփական ԵՍ-ի գիտակցումը: Եթե ունեք, ապա ինչպե՞ս եք ձեր սեփական ԵՍ-ը գիտակցում: Սա պարզ վարժություն չէ, չափազանց կարևոր վարժություն է, որը հնարավորություն է տալիս մարդուն կազմակերպել սեփական մտածողությունը, կարողությունները և կողմնորոշվելով ժամանակակից աշխարհում, կյանքում սեփական նպատակ սահմանել, որպեսզի կյանքը լինի լցված: Այդ առումով ուզում եմ մեջբերել այս ոլորտի հանրահայտ գիտնականներից մեկին՝ Կարլ Գուստավ Յունգին, որն անցած դարի սկզբում էր ստեղծագործում, հայտնի հոգեբան էր և հոգեբույժ: Նա ասել է հետևյալը՝ ժամանակակից աշխարհի գլխավոր նկրդը դատարկությունն է, այսինքն՝ մարդու կյանքը պետք է լցված լինի իմաստով, իսկ եթե մարդը չի կարողանում իմաստավորել իր կյանքը, նա առնչվում է նկրդի հետ: Ընդ որում, որքան կրթված է մարդը, այսինքն՝ եթե այդ մարդը ստացել է գիտելիքներ, այնքան նկրդը դառնում է խորը, եթե նա չի կարողանում կողմնորոշվել կյանքում և իր համար նպատակ ձևավորել:

Չիմա մենք ձեզ հետ միասին պետք է ինքնագիտակցություն հասկացությունը լցնենք բովանդակությամբ: Ինքնաճանաչումը, որն այդ հասկացության առաջին տարրն է, պրոցես է, գործընթաց է, և չափազանց կարևոր է, թե ինչպես ենք մենք դա իրականացնում: Ինքնաճանաչման գործընթացում մենք փորձում ենք հասկանալ, թե որոնք են մեր սեփական արժեքները, այն արժեհամակարգը, որը մեզ համար ընդունելի է և կիրառելի: Ինքնաճանաչման գործընթացի առաջին փուլը սեփական արժեհամակարգի գիտակցումն է: Այսինքն՝ ձեզ համար սահմանում եք, թե ինչն է

լավ, ինչն է վատ, դուք ինչն եք համարում լավ և ինչը՝ վատ ձեր շրջապատի համար, ձեր ընտանիքի համար, հասարակության համար, ձեր ազգի համար: Դա գիտակցելն ինքնաճանաչման առաջին փուլն է, ինչը նշանակում է, որ դուք այդ հարցերը տալիս եք ձեզ և դրանց պատասխանները որոնում ձեր մեջ: Այսինքն՝ դուք ունեք ձեր սեփական արժեհամակարգը: Այդ առումով էական նշանակություն ունի, թե ինչպիսին է ձեր էությունը: Այսպիսի վարժություն կատարելով, դուք ինքներդ կկարողանաք ձեզ հասկանալ:

Մյուս քայլը սեփական կարողությունների, սեփական գիտելիքների գնահատումն է և դա նույնպես ինքնաճանաչման գործընթացի կարևորագույն տարրերից մեկն է: Մենք անցյալում առիթ ունեցել ենք քննարկել ռեֆլեքսիայի գործընթացը, ինչը թույլ է տալիս, որպեսզի ճանաչենք ինքներս մեզ, ռեֆլեքսիան ինքնաճանաչման գործիք է: Ռեֆլեքսիայի միջոցով կարող եք ինքներդ ձեզ ճանաչել: Ռեֆլեքսիան ինքն իրեն կողքից նայելու փորձ է, ասենք, որևէ մեկը խոհանոցի պատուհանից տեսնում է, թե ինքն ինչպես է դուրս գալիս շքամուտքից, նստում իր մեքենան, հետո ինչպես է գնում աշխատանքի, ինչպես է իրեն պահում աշխատավայրում, ինչպես է շփվում մարդկանց հետ, ինչն է ճիշտ անում, ինչն է սխալ անում: Այդ վարժությունը կոչվում է ռեֆլեքսիա: Սա չգիտակցվածից գիտակցվածին անցնելու միջոց է: Ձեր վարքագծային կանոնների մեջ կան շատ բաներ, որ անում եք ինտերցիայով՝ չնկատելով: Դա ձեր ենթագիտակցության մեջ է և չեք էլ մտածում դրա մասին: Իսկ ռեֆլեքսիան ձեզ հնարավորություն է տալիս դա ձեզ համար բացահայտել: Այսինքն՝ դա նաև միջոց է ձեզ համար բացահայտել այն չգիտակցված վարվելակերպը, որն առկա է, եթե ինքներդ սկսեք ձեզ դիտարկել և ուսումնասիրել: Դա չափազանց կարևոր վարժություն է, որը կիրառվում է բոլոր ժամանակակից գիտություններում և տարբեր ոլորտներում, որովհետև ռեֆլեքսիան լինում է ոչ միայն անհատական, այլև՝ խմբակային: Ժամանակակից մեթոդաբանությունն առաջարկում է, որպեսզի ռեֆլեքսիան կիրառվի հատկապես կրթական համակարգերում: Մանուկ Սկոտչյանն իր դպրոցում փորձում է մանկուց երեխաների մեջ ներդնել այդ գործիքը, որպեսզի նրանք մշտապես կարողանան իրենք իրենց բացահայտել ռեֆլեքսիայի միջոցով: Ռեֆլեքսիայի շնորհիվ հնարավոր է ապագայում հասնել տրանսդենցիայի: Դա Մասլոուի բուրգի վերին աստիճանն է:

Ի՞նչ է դա նշանակում: Դա նշանակում է ռեֆլեքսիայի միջոցով բացահայտել ձեր սեփական կարողությունները և դրանք՝ ձեր կարողությունները, ձեր արժեհամակարգը հասցնել բացարձակի: Դա, ձեր հարաբերակցությունը ձեր այդ բացարձակացված կարողությունների, արժեքների հետ տրանսդենցիան է: Դա ռեֆլեքսիայի ավելի բարձր մակարդակ է, որովհետև հնարավորություն է տալիս ընդլայնել ձեր պատկերացումները ձեր կարողությունների մասին և դրսևորել կամքի ուժ: Մեկ մեջքերում Յեզեկից, որը ոգու գաղափարը ներմուծեց փիլիսոփայություն և այդ կատեգորիան էր օգտագործում նկարագրելու համար բազմաթիվ հասարակական և անհատական ընկալումներ: Նա ինքնագիտակցության պրոբլեմը տեղափոխեց կամքի, ինքնագարգացման դաշտ, ինչն ինքնագիտակցության որակապես այլ մեկնաբանություն է, ըստ որի ինքնագիտակցությունն առնչվում է կամք ունեցող սուբյեկտի հետ, իսկ սեփական կարողությունների ընկալումները, որոնք առկա են, կարող են իրացվել կամքի դրսևորման պարագայում: Ուրեմն, ինքնագիտակցության գործընթացն այն պրոցեսներն են, որոնք հնարավորություն են տալիս այդ կամքն ամբողջությամբ բացահայտել և իրացնել: Կանտը հետևյալ ձևակերպումն է տալիս. «**Իմ իրողության մեջ առկայության գիտակցումն է, միաժամանակ նշանակում է, որ կա գիտակցում ինձնից դուրս**»:

Այսինքն՝ եթե դու գիտակցում ես, որ որպես ինքնուրույն ԵՍ գոյություն ունես իրողության մեջ և ունես դա գիտակցելու կարողություն, դա ինքնագիտակցումն է՝ ըստ Կանտի: Եթե դու կարողանում ես կազմակերպել քո ինքնագիտակցումը, ուրեմն կարողանում ես տեսնել ինչն է քո մեջ, ինչը՝ քեզնից դուրս: Յետագայում հասարակագիտության մեջ սկսեցին դա ավելի ակտիվորեն կիրառել, որովհետև գիտնականներն առաջ քաշեցին թեզեր, թե ինքնագիտակցությունը բնորոշ է ոչ միայն մեկ մարդու, այլև մարդկանց խմբերի, հասարակությանը, ցեղերին, ազգերին և նրանք նույնպես ունեն այդ գործիքակազմը, որով կկարողանան այդ վարժությունն անել՝ դրսևորելով իրենց ինքնագիտակցությունը:

Այսինքն՝ երբ խումբը և խմբի անդամներն ունեն միասնականության ընկալում (գիտակցում են միասնական), իրենց նույնականացնում են նույն խմբում, բնութագրում են իրենց ընդհանրական շահերը, նպատակները, այդտեղ դրսևորվում է կոլեկտիվ մտածողություն, կոլեկտիվ ինքնագիտակցում: Այդ պարագայում գործունեության դաշտում այդ խմբերը կարողանում են իրացնել իրենց կոլեկտիվ ինքնամտածողությունն ու ինքնագիտակցումը տարբեր գործիքակազմերի միջոցով: Ինքնության գիտակցումը խմբի կողմից, դա սեփական շահերի ընկալումն է, ընդհանուր արժեքների շուրջ համախմբումը, միասնական նպատակների ձևավորումը: Այստեղ էլ կան գործիքներ, որոնք հնարավորություն են տալիս բացահայտել հասարակական խնդիրները և երևույթները. դա ինքնագնահատումն է, ինքնակարգավորումը, որովհետև այս վարժությունները հնարավորություն են տալիս ձևավորել միասնական աշխարհընկալում և դրա հիման վրա մշակել գաղափարախոսություն: Այսինքն՝ կոլեկտիվ գաղափարախոսությունը փուլ կատեգորիա չէ, այլ ինքնագիտակցության իրացման գործիք: Եթե կա կոլեկտիվ ինքնագիտակցություն, դա նշանակում է, որ ինքնագիտակցումը, ինքնամտածողությունն ունենում են դրսևորման ձևեր: Եթե այս ձևակերպումները, որոնք տվեցի, ընդունում ենք որպես հիմք, եթե կա մի խումբ և այդ խումբը համախմբվում է ինչ-որ շահերի շուրջ, ինչ-որ նպատակների շուրջ, ինքնանույնականացման շուրջ, ապա դա նշանակում է, որ ձևավորվում է ընդհանրական դաշտ և եթե խումբը կարողանում է ձևավորել միասնական նպատակ, ապա այդ նպատակին հասնելու համար մշակվում է գաղափարախոսություն: Դա իր մեջ ներառում է մտածողությունը, արժեհամակարգը, նպատակին հասնելու միջոցները: Ամենակարևորն արժեհամակարգն է, որովհետև խումբը հենց այդ արժեհամակարգի միջոցով է հասնելու իր նպատակին:

Անդրադառնա՞նք մյուս հասկացությանը, որը **նույնականացումն** է, որը նույնպես կարևոր էլենենտ է: Հասկանա՞նք, թե ինչպես է դա դրսևորվում: Նույնականացում տերմինն առաջին անգամ օգտագործել է Ֆրեյդը անցյալ դարի սկզբում՝ հոգեբանության մեջ: Նա դուրս եկավ այս հասկացության վրա ընդօրինակման մեխանիզմն ուսումնասիրելով՝ երբ մարդը, նոր ծնվածը դեռևս անգիտակից, սկսում է կրկնօրինակել: Դա տեղի է ունենում հետևյալ կերպ. նա սկսում է ընդօրինակել իր մոր վարքագծային կանոնները, ինչը հիմնավորվում է երեխայի՝ իր ծնողի հետ էնոցիոնալ կապով: Երեխայի մոտ առաջին հերթին ձևավորվում են ինստինկտներ, հետո կամաց-կամաց երեխան այդ բնազդներից անցնում է զարգացման ավելի բարձր աստիճանի, բայց առաջին փուլը նույնականացման ճանապարհն է, երբ ինքը մշտապես իրեն հարաբերում է իր ծնողի հետ, ընդօրինակում ծնողի վարքագծային կանոններն ու փաստորեն բնազդայինից աստիճանաբար անցնում է կատարում դեպի գիտակցվածը, անգիտակիցից՝ գիտակցվածին:

Դա Ֆրեյդի համար չափազանց կարևոր էր. մեթոդաբանական նոր հասկացություններ մտցնելով, նա ավելի լավ էր հասկանում մարդուն, թե ինչպես է ձևավորվում մարդու ներքին աշխարհը, ինչն է բնազդների վրա հիմնված, ինչն է ընդօրինակման արդյունք և ինչն է հետագայում գիտակցված ձեռքբերում: Վերլուծությունները Ֆրեյդը հոգեբանական մեթոդաբանական ամուր հիմքի վրա էր դնում, դրա համար նրան անհրաժեշտ էր այդ նույնականացման գաղափարը մանրակրկիտ վերլուծել և բացահայտել: Հետագայում անցում է կատարվում արդեն դեպի բարոյական իրողությունների ուսումնասիրություն, որովհետև այն նորմերը, որ մենք ընդօրինակում ենք, իրենց մեջ պարունակում են արժեհականարգ: Ինչպիսի վարքագծային կանոններ ընդօրինակեմ ծնողներիցս, դրանք ինձ համար կդառնան հարազատ՝ դա արդեն իմ արժեքային համակարգն է, ընկալումն է:

Ուստի այն նորմերը, արժեքները, արգելանքները, վարքագծային կանոնները, որ մենք ընդօրինակում ենք առաջին փուլում մեր ծնողներից, երկրորդ փուլում՝ հեղինակություններից (դա կարող է լինել ավագ եղբայրը, հետագայում՝ ուսուցիչը, հետո մի պատկեր իդեալականի մասին, որը ինքներս ենք մեզ համար ստեղծում) նկարագրում է մեզ, մեր արժեհամակարգը: Ի՞նչ է տեղի ունենում: Կատարելով հետևյալ վարժությունը՝ հարաբերելով իրեն այն մարդու հետ, որն իր համար հեղինակություն է, մարդն իր կյանքի ընթացքում մշտապես լուծում է նույնականացման խնդիրը: Երբ

նա այդ վարժությունն անում է, նա տեսնում է իր ուժեղ և թույլ կողմերը, ինչով է ինքը նման և ինչով նման չէ, որտեղ է իր շեղվածությունը, որտեղ պետք է ինքն ավելացնի իր կարողությունները, որտեղ պետք է փոխի իր բնավորությունը, որպեսզի հասնի իդեալական պատկերին: Հենց սա է նույնականացման գործընթացը:

Ապագայում այս հասկացությունը, որը Ֆրեյդը ներդրեց ոչ օրթոդոքսալ հոգեբանության մեջ, ստացավ լայն տարածում և դարձավ ավելի լայն հասկացություն, որպես ԵՍ-ի հոգեբանական պաշտպանության մեխանիզմ, որպես ինքնազարգացման կարողության մեխանիզմ:

Այսպիսով արձանագրենք, որ նույնականացման սուբյեկտն անձն է: Հետագայում նույնականացման խնդիրը հոգեբանությունից տեղափոխվեց նաև հասարակագիտություն, ինքնանույնականացման սուբյեկտը դարձավ խումբը, էթնոսը, ազգը: Այդ միջավայրներում ևս վարժությունը նույն ձևով է կատարվում: Այդ վարժությունը կարող ենք այստեղ էլ անել. եթե մենք խումբ ենք, որ ունենք ընդհանրական շահեր, պատկերացումներ, արժեքային համակարգ, կարողանում ենք ինչ-որ նպատակ ֆիքսել, պետք է ինքներս մեզ հարցնենք՝ իսկ ինչ ենք մենք այսօր մեզանից ներկայացնում: Սկսում ենք այդ վերլուծությունն անել, միշտ մտքում պահելով այն իդեալական պատկերը, որին ուզում ենք հասնել: Այդ համեմատությունն, այդ նույնականացումն անելով տեսնում ենք՝ արդյո՞ք նման ենք այդ իդեալական պատկերին, թե՛ ոչ: Նույն վարժությունը կարելի է անել տարբեր մակարդակներում, ինչն, իհարկե, սկսվում է ինքնանույնականացումից. ամեն անձ ինքը պետք է անի այդ վարժությունը, եթե ուզում է հասնել ինքնազարգացման բացարձակ մակարդակի: Ձեր կյանքի ընթացքում քայլ առ քայլ լուծելով այն խնդիրները, որոնք դնում եք ձեր առջև, փուլային զարգացմամբ հասնում եք բացարձակին:

Ինքնանույնականացման սուբյեկտն անձն է, խումբն է, որը կարող է ինքնագիտակցություն դրսևորել այնպես, ինչպես ես նկարագրեցի. մարդիկ կարող են համախմբվել ընդհանրական շահերի և պատկերացումների շուրջ, կարող է ձևավորվել կոլեկտիվ սուբյեկտ, իսկ սուբյեկտն այդ տեսակետից կարող է լինել անձը, խումբը, ազգը և այլն:

Այդ դեպքում **օբյեկտը ո՞րն է:** Դա այն է, որի հետ մենք հարաբերվում ենք, որի հետ համեմատում ենք ինքներս մեզ: Հենց դա էլ կարող է հանդես գալ որպես օբյեկտ, օբյեկտ կարող է լինել ռեալ մարդը: Օրինակ, մարդն ասում է իմ օբյեկտը, իմ նույնականացման օբյեկտը, իմ իդեալը Հենրիկ Մխիթարյանն է: Դա նշանակում է, որ ինքը մշտապես ինքնանույնականացման խնդիրը լուծելու է իր ներքինը հարաբերելով այդ օբյեկտի հետ: Օբյեկտը կարող է նաև ռեալ մարդ չլինել, այլ որևէ հերոս՝ գրքից, կինոյից կամ ֆիլմից: Կամ՝ ինքներդ կարող եք ձեզ համար իդեալ մոգոնել, դա ձեզ համար դարձնել օբյեկտ՝ խնդիրն այդ ձևով լուծելով, հարաբերվելով օբյեկտի մասին ձեր պատկերացման հետ, բացահայտելով ձեր ուժեղ և թույլ կողմերը:

Նույնականացումը լինում է գիտակցված և անգիտակից. կարևոր է արձանագրել, որ առկա է էնոցիոնալ հանգամանք, երբ դուք ընդօրինակումն իրականացնում եք անգիտակիցորեն: Այսինքն չեք հասկանում, որ այդպիսի վարժություն եք անում, կյանքում այդպիսի նպատակ ունեք, բայց կան ինչ-որ մտերիմ հարաբերություններ, ձեզ վրա ազդեցություն է ունենում ինչ-որ հեղինակություն, կամ ինչ-որ հարազատ մարդ և կամաց-կամաց այդ ազդեցությունն անցնում է ձեզ: Կա նաև մեկ այլ, ոչ գիտակցված նույնականացման ձև՝ երբ տեսնում եք ինչ-որ վտանգներ, գտնվում եք էնոցիոնալ ճնշման տակ, ձեր անձը պաշտպանելու համար սկսում եք նմանվել ձեր հակառակորդին, ձեր թշնամուն՝ ձեռք բերելով այնպիսի վարքագծային կանոններ, որոնք բնազդորեն թվում է, թե ձեզ պաշտպանելու են: Այդպես ինքնապաշտպանական ռեակցիաներն են սկսում աշխատել ձեր մեջ:

Անցնենք հասարակագիտության, ինչպես նաև սոցիալական հոգեբանության բնագավառներ: Արդեն խոսել ենք սրա մասին. անցյալ դարի 50-60-ական թվականներին հոգեբանությունը տեղափոխվեց դեպի սոցիալ-հասարակական հոգեբանության դաշտ. սկսեցին քննարկել անձի հասարակայնացման մեխանիզմները, թե ինչպես է ստացվում, որ ձևավորվում են ընդհանրական

պատկերացումներ, ինչպես է մարդը դառնում հասարակական էակ, հասարակության մասին ինքն ինչ պատկերացումներ ունի: Հարցերի այս շրջանակն առնչվում է արժեքային համակարգին. մարդը հասկանում է, որ ինքը հասարակական էակ է, ապրում է մարդկանց մեջ և նրանց միջավայրում: Չափազանց կարևոր է այն իրողությունը, որ հոգեբանները դուրս եկան մեխանիզմի վրա, որ չեն կարող մարդուն կտրել հասարակական հարաբերություններից և սկսեցին վերլուծել այդ մեխանիզմները՝ անհատի հասարակայնացման մեխանիզմները: Մարդն ինքն իրեն նույնականացնում է որոշակի խմբի, կամ հանրության հետ: Դիտարկենք մեկ վարժություն՝ արդյո՞ք մարդը կարող է իրեն նույնականացնել մի քանի միջավայրի հետ: Ինչո՞ւ է սա կարևոր մեզ համար: Հայերը, որոնք ապրում են արտասահմանում, այլ հասարակության մեջ են կրթություն ստանում, բայց ասում են՝ մենք հայ ենք: Մի կողմից նրանք իրենց նույնականացնում են այն արժեքների միջավայրում, որում ապրում են, դա ընդունում են, կենցաղվարության մեջ դրանք են կիրառում, իրենց համար դա նորմալ է, բայց մյուս կողմից կարողանում են գիտակցաբար իրենց նույնականացնել մեկ այլ իդեալական պատկերացման, մեկ այլ ազգի հետ, օրինակ՝ հայի հետ, չնայած ապրում են այլ հասարակության մեջ, այլ արժեքներով: Երբ անհատը միևնույն ժամանակ երկու հասարակությունների հետ է իրեն նույնականացնում, դա կոչվում է անվիվալենտնոստ: Այս առումով նույնականացումն օգնում է իրացնել վարքագծային ստերիոտիպներ, որոնք բնորոշ են այդ խմբին, ազգին, ընդունված են խմբի, ազգի կողմից որպես սեփական խմբային նորմեր, նպատակներ, սոցիալական դերեր, իդեալներ: Այդպիսով, ինքնանույնականացումից անցում է կատարվում դեպի հասարակայնացում: Ընդ որում, այս մեթոդաբանությունն օգտագործվում է տարբեր առարկաներում, օրինակ, ինժեներիայում, իրավական հոգեբանության մեջ, որոնցում այն լայն կիրառում է ստացել, որովհետև դա համադրման գործիք է, որ նպատակ ունի համեմատել նմանություններն ու տարբերությունները:

Կա և էթնիկական հոգեբանություն, որն ուսումնասիրում է էթնիկական խմբերի ինքնագիտակցման ձևավորումն ու պահպանումը: Այստեղ նույն մեթոդաբանությունն է աշխատում: Օգտվելով այս մեթոդաբանությունից, կարող ենք անել նույն վարժությունը: Որոնք են էթնիկական ինքնագիտակցության ձևավորման ուղիները, ստերիոտիպերը, այն վարքագծային կանոնները, որոնք էթնիկական խումբն ընդունում է, ինչ մեխանիզմներով է այդ էթնիկական խումբն իր վարքագծային կանոնները, ստանդարտները, ստերիոտիպները հաղորդում ապագա սերունդին, և այդ սերունդն ինչպես է ընկալում, վերարտադրում, և հետո տրանսլիացիայի միջոցով հաղորդում ապագա սերունդներին, ինչպես են պահպանվում այդ ավանդույթները, ծեսերը: Էթնիկական հոգեբանության այդ բացահայտումը ցույց է տալիս, թե որ նորմերն են ընկած աշխարհընկալման հիմքում: Հենց դա էլ դառնում է էթնիկական ինքնագիտակցության կարևորագույն տարր: Կա ձևակերպում, որ հայտնի ավստրիացի փիլիսոփա Ֆրանց Պրենտանն է տվել՝ համապատասխանեցումը մտածողության կատարյալին՝ նույնականացումն է: Դա անհատի ինքնանույնականացման խնդիրն է:

### **Երրորդ կարևորագույն տարրը՝ ինքնորոշումն է, ի՞նչ է ինքնորոշումը:**

Ինքնորոշումը հիմնականում կիրառվում է որպես ինքնուրույն եզրույթ, որպես կոլեկտիվ շահերի իրացման մեխանիզմ, բայց իրականում այն ինքնագիտակցության շատ կարևոր հասկացություն է, 3 կարևոր տարրերից մեկն է, որովհետև առանց ինքնորոշման դուք չեք կարող ասել, որ դարձել եք մտածող մարդ: Դա սեփական դիրքի ընտրության գործընթացն է, նաև՝ արդյունքը: Այսինքն՝ արդեն գալիս է որոշում կայացնելու պահը: Հեզելի խոսքով՝ դա արդեն ոգու իրացման, սեփական դիրքի որոշման գործընթացն է և արդյունքը կոնկրետ կյանքի պայմաններում, որովհետև ձեր կյանքի ընթացքում անպայման պետք է կողմնորոշվեք, պետք է ինքնորոշվեք, եթե ուզում եք դառնալ մտածող մարդ: Եթե սա ընդունում ենք որպես հիմք, դա նշանակում է, որ ինքնորոշումն ազատության ձեռքբերման և դրսևորման հիմնական մեխանիզմն է: Ազատություն հասկացությունը կապված է ինքնորոշման հետ, այսինքն ինքնորոշումն ազատության ձեռքբերման և դրսևորման հիմնական մեխանիզմն է: Ինչո՞ւ է այդպես, ինչո՞ւ է ինքնորոշումն առնչվում ազատության հետ:

Որովհետև՝ դուք որպես անձ, մտածող էակ, եթե կարողանում եք կողմնորոշվել պրակտիկ կյանքում և ձեր դիրքն այնտեղ հաստատել, դա նշանակում է, որ ունեք պատկերացումներ արժեքների մասին, ընտրություն եք կատարել, դա նշանակում է, որ ձեզ համար սահմաններ եք գծում, թե ինչն է ձեզ համար ընդունելի և ինչն ընդունելի չէ: Ինքներդ եք ձեր ազատության շրջանակը գծում, դրանով որոշելով, որ սա լավ է, սա վատ է: Անշուշտ, առկա է գիտակցված և չգիտակցված իրողությունների հանգամանքը, ինչի մասին մենք խոսեցինք, որովհետև չգիտակցված ձևով էլ եք ձեր ազատությունը սահմանափակում, առանց մտածելու դրա մասին, առանց ինքնորոշվելու էլ է դա ձեր մեջ դրված, որովհետև գիտեք, որ, ասենք, այս մի բանը չի կարելի անել: Պաշտպանական ռեակցիա է քո մեջ, որով ազատությունդ սահմանափակում ես: Օրինակ, դու ասում ես այս տեսքով չեմ կարող փողոց դուրս գալ. բացատրություն չկա, դրա մասին չես էլ մտածում, որովհետև այդպիսի դաստիարակություն ես ստացել, առաջին փուլն անցնել ես ընդօրինակելով քո մոր, քո ծնողների վարքագծային կանոնները: Դրանք անցել են ենթագիտակցությանդ մեջ և դու դրանով քո վարքագծային կանոններն ես սահմանել, գծել ես ազատությանդ շրջանակները: Դրանից հետո գալիս է ինքնորոշման պահը, դա արդեն անում ես գիտակցաբար, երբ կողմնորոշվում ես այս արագ փոփոխվող կյանքում: Տարբեր արժեհամակարգեր կան, բանավեճեր կան ու դու որոշում ես կայացնում՝ այ սա է իմը՝ դրանով գծելով քո ազատության շրջանակը: Բայց միաժամանակ, եթե դուք ինքնորոշվելու համարձակություն ունեք, դա նշանակում է, որ ինքներդ էլ տնօրինելու և կերտելու եք ձեր ճակատագիրը, որովհետև ինքորոշումը գործիք է: Դիրքավորվեցիք, հասկացաք ձեր նպատակը՝ ձեր դիրքը կա արդեն, այդուհետև այդ գործիքն օգտագործելու եք կյանքում ձեր տաղանդները, շնորհներն իրացնելու համար: Հոգեբաններն առաջ են քաշում ինքնիրացման գաղափարը, որն այստեղից է գալիս: Սա ամենակարևոր հասկացություններից մեկն է հոգեբանության մեջ, որովհետև մարդը դեպիսիայի մեջ է ընկնում, երբ որ ինքն ունի տաղանդներ, շնորհներ և չի կարողանում իրացնել դրանք, այդպիսով հայտնվելով վատ վիճակում՝ ինքնիրացման դաշտ իր մոտ չկա: Այս գործիքները հնարավորություն են տալիս մարդուն այդ ճնշված վիճակից դուրս գալ. ինքն արդեն կարող է ռեֆլեքսիա անել: Անձը կարող է անդրադառնալ ինքնորոշման խնդրին, արժեհամակարգին, նորից նույնականացման մեխանիզմը վերատեսության ենթարկել, հասկանալու համար՝ միգուցե գերազնահատել է սեփական էությունը, միգուցե տրվել է սխալ ինքնագնահատական նույնականացման գործընթացում, միգուցե նորից պետք է անի այդ վարժությունը և հասկանա՝ ունի՞ իրականում իր պատկերացրած հնարավորությունները, և եթե չունի, ուրեմն պետք է վերանայի ինչ-որ բան: Չափազանց կարևոր է, երբ ինքնորոշվում եք՝ դրա շնորհիվ կարողանում եք ընտրել այն միջավայրը, մշակութային տարածությունը, արժեքային համակարգը, որը ձեզ հարազատ է: Այդ սահմանափակումները ձեզ համար ինքներդ եք սահմանում: Ինքնորոշումը դառնում է իրական ԵՍ-ի և իդեալական ԵՍ-ի տարբերությունները վերացնելու նախապայման: Սրանք էին այն մեթոդաբանական հիմքերը, որոնք ես պարտավոր էին ձեզ տալ:

Այս վարժության օգնությամբ մենք երբեք չենք դիմել: Միանգամից անցել ենք նույնականացման խնդրի շուրջ մեծ և բարդ դասախոսության, քննարկելով, թե ինչ է ներկայացնում հայ ժողովուրդն իրենից, ինչպես է լուծում ինքնանույնականացման խնդիրը, որտեղ է պատկերացնում ինքն իրեն որպես ազգ, որն է իր էությունը, ինչպիսին է մեր ինքնությունը, մենք պետք է նախընտրենք Եվրոպան, թե Եվրասիական միությունը, թե պետք է հավակնություն ունենանք, որ ինքնուրույն լոկալ քաղաքակրթություն ենք: Այս հարցերի պատասխանը տալու համար պետք է օգտվենք այն մեթոդաբանական գործիքակազմից, որ ներկայացվեց այստեղ: Եթե գործիքների շուրջ առարկայանում է համաձայնություն, բանավեճը դառնում է ավելի հեշտ, որովհետև արդեն կարող ես տալ հարցերը՝ որն է իդեալի քո պատկերացումը, որոնք են հիմքերն այս կամ այն եզրակացության համար, ինչպես է այս կամ այն բնավորության գիծը փոխանցվել հայերին՝ գիտակցաբար, թե ենթագիտակցաբար, կրկնօրինակման արդյունք է, թե գործել է այլ մեխանիզմ, ավանդույթի արդյունք է, ծիսականության, թե պարտադրանքի: Այս գործիքները մեզ հնարավորություն կտան կատարել վերևում նկարագրված վարժությունը և ստանալ կամայական հարցի պատասխան: